ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՊՐԵՍՅԱՆ ԶՈՀՐԱԿ ՄԵԽԱԿԻ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊՐԱԿՏԻԿԱՆ)

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2021

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АПРЕСЯН ЗОРАК МЕХАКОВИЧ

КОНСТИТУЦИОННЫЕ ГАРАНТИИ ЗАЩИТЫ ПРАВА СОБСТВЕННОСТИ (СРАВНИТЕЛЬНОЕ ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ И ПРАКТИКА ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - «Публичное право-конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН – 2021

Ատենախաստության թեման հաստատվել է Եվրոպական համալսարանի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ. Ա. Տխաբիսիմովա**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հ. Ա. Ստեփանյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. հուլիսի 19-ին ժ. 11^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հ. Էմինի 123):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի ընթերցասրահում:
Սեղմագիրն առաքվել է 2021 թ. հունիսի 8-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու Ջ. Հ. Հայրապետյան

Тема диссертации была утверждена в Европейском университете РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А. А. Хачатрян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Л. А. Тхабисимова**
кандидат юридических наук, доцент **А. А. Степанян**

Ведущая организация: **Институт философии, социологии и права НАН РА**

Защита состоится 19-ого июля 2021 г. в 11^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянского университете (0051, г. Ереван, О. Эмина 123).
С диссертацией можно ознакомиться в читальном зале библиотеки Российско-Армянского университета.
Автореферат разослан 8-ого июня 2021 года.
Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук Дж. А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը. արդի հասարակությունում գրեթե ցանկացած անձի պահանջմունքների բավարարման համար կարևորագույն նշանակություն ունի սեփականության իրավունքով որոշակի գույքի պատկանելիությունը վերջինիս: Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքի բոլոր ձևերը գտնվում են պետության պաշտպանության ներքո, և պետությունը պարտավոր է ինչպես պաշտպանել սեփականատիրոջ իրավունքները երրորդ անձանց ոտնձգություններից, այնպես էլ չմիջամտել սեփականատիրոջ կողմից սեփականության իրավունքի իրականացմանը: Իսկ մյուս կողմից՝ սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնասի հասարակության և առանձին անձանց իրավունքներին և օրենքով պաշտպանվող շահերին: Հետևապես, հաշվի առնելով պետության համար նման պարտականության առկայությունը՝ անհրաժեշտություն է հանդիսանում սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքների սահմանումը բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով և դրան համապատասխանող օրենքներով՝ հնարավորինս ապահովելով արդարացի հավասարակշռությունը տարբեր անձանց իրավունքների և օրինական շահերի միջև:

Ի լրումն սեփականության իրավունքի մեծ կարևորության՝ տվյալ թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով, որի արդյունքում սեփականության իրավունքին նվիրված նորմերում կատարվել են զգալի փոփոխություններ:

Բացի այդ՝ ներկայումս գործող օրենսդրությամբ անձի սեփականության իրավունքի և հանրության ու այլ անձանց շահերի միջև հարաբերակցությունը չի գտնվում հնարավոր ամենաբարձր մակարդակի վրա՝ գլխավորապես վնասելով առաջինի շահերը: Նման պայմաններում անհրաժեշտություն է ծագում վերանայելու սեփականության իրավունքի պաշտպանության առկա երաշխիքները, ինչպես նաև սահմանելու նորերը՝ ուսումնասիրելով նաև տվյալ ոլորտում միջազգային լավագույն փորձը:

Սեփականատիրոջ և այլ անձանց իրավունքների միջև արդար հարաբերակցության սահմանման համար կարևոր նշանակություն ունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ վերջին տասնամյակներում արտահայտած դիրքորոշումները, որոնցով ինչպես սահմանվում են սեփականության իրավունքի շրջանակները, որոնք, ի դեպ, ժամանակի

ընթացքում ենթարկվում են փոփոխությունների, այնպես էլ նախատեսում են սեփականության իրավունքի սահմանափակման հնարավորությունն այլոց իրավունքների պաշտպանության նպատակով:

Նման միջազգային փորձի ներդրումը ներպետական իրավական համակարգում կհանգեցնի սեփականության իրավունքի պաշտպանության գործուն երաշխիքների սահմանմանը, սեփականատիրոջ և այլ անձանց իրավունքների արդարացի հավասարակշռմանը, սեփականատիրոջ իրավունքի սահմանափակումների հստակ և տեղին սահմանմանը, որոնցով էլ պայմանավորված է սույն աշխատանքի արդիականությունը:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ առանձին դեպքերում ներպետական օրենսդրությամբ նախատեսված են սեփականության իրավունքի պաշտպանության ավելի բարձր երաշխիքներ, քան միջազգային պայմանագրերում, սակայն դրանք միշտ չեն պրակտիկայում մեկնաբանվում իրենց ուղղակի նշանակությամբ:

Հետազոտության նպատակները և խնդիրները. սույն ատենախոսության նպատակն է մարդու հիմնական իրավունք հանդիսացող սեփականության իրավունքի պաշտպանվածության աստիճանի բարձրացումը, սեփականատիրոջ իրավունքների և երրորդ անձանց ու հասարակության շահերի միջև արդարացի հավասարակշռության հաստատումը, միջազգային լավագույն փորձի ներդրումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ:

Սահմանված նպատակներին հասնելու համար հեղինակի առջև դրվել են հետևյալ խնդիրները՝

ա) ՀՀ սահմանադրական իրավունքում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի շրջանակներում սեփականության և սեփականության իրավունքի հասկացության բացահայտում,

բ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումներում սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված մեկնաբանությունների իրավական համեմատություն ՀՀ օրենսդրությամբ և դատական ակտերով նախատեսված նորմերի հետ,

գ) սեփականության իրավունքի պաշտպանության ավելի բարձր երաշխիքների առանձնացում, առկա երաշխիքների բարելավման կամ նոր երաշխիքների սահմանման վերաբերյալ առաջարկների ներկայացում,

դ) սեփականության իրավունքի պաշտպանության և հանրային շահի միջև արդարացի հավասարակշռության հաստատման մեխանիզմների որոնում:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը, տեսական և նորմատիվ հիմքերը. հայկական տեսական գրականության մեջ սեփականության իրավունքն ուսումնասիրվել է տարբեր հեղինակների կողմից, այդ թվում՝ Տ. Բարսեղյանի և Դ. Սերոբյանի աշխատություններում: Ռուս մի շարք հեղինակներ, ինչպիսիք են օրինակ՝ Ե. Սուխանովը և Օ. Ալեքսեևան, իրենց աշխատություններում նույնպես անդրադառնում են սեփականության իրավունքին: Սակայն դրանցում սեփականության իրավունքը հետազոտվում է մասնավոր իրավունքի շրջանակներում՝ առանց անդրադառնալու սեփականության իրավունքի սահմանադրական և միջազգային կարգավորումներին:

Առանձին հեղինակներ անդրադարձել են սեփականության իրավունքի սահմանադրական կարգավորմանը, սակայն վերջիններիս աշխատությունների առարկան է հանդիսանում ՀՀ Սահմանադրությունն ամբողջությամբ, և սեփականության իրավունքը չի հետազոտվում ամբողջ խորությամբ: Բացի այդ՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո սեփականության իրավունքի սահմանադրական կարգավորման մեջ օգտագործվում են այնպիսի եզրույթներ, որոնք առկա չէին նախկինում: Օրինակ՝ գործող Սահմանադրությամբ նախատեսված է պետության պարտականությունը պաշտպանելու անձի՝ *օրինական հիմքով ձեռք բերած* սեփականությունը, կամ *կտակելու իրավունքի* փոխարեն խոսվում է *ժառանգելու երաշխավորված իրավունքի* մասին, որոնք ևս արժանի են պատշաճ վերլուծության:

Առկա են նաև տարբեր օտար հեղինակների՝ Լ. Սերմեի, Ա. Քլարկի, Պ. Կոհլերի և այլ հեղինակների օտարալեզու աշխատանքներ, որոնք նվիրված են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 1-ին արձանագրության շրջանակներում սեփականության իրավունքի պաշտպանությանը: Այդ հարցին են անդրադառնում նաև հայ հեղնինակներ Է. Ամիրխանյանը և Ա. Հարությունյանը:

Չնայած վերոնշյալ հեղինակների՝ սեփականության իրավունքի կարգավորման համար մեծ արժեք ներկայացնող աշխատությունների առկայությանը, որոնք այլ աշխատանքների հետ միասին տեսական հիմք են հանդիսացել տվյալ ատենախոսության համար, սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքների ընդհանրական և խորը վերլուծությունների ենթարկված աշխատանք հայկական գրականության մեջ առկա չէ:

Այնուամենայնիվ, տվյալ ատենախոսության համար առանձնահատուկ կարևորություն է ունեցել դրա իրավական հիմքը: Մասնավորապես,

ուսումնասիրվել են ՀՀ Սահմանադրությունը, ներպետական օրենսդրական ակտեր, այլ պետությունների սահմանադրություններում սեփականության իրավունքին նվիրված նորմեր, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, և վերջապես՝ իրավունքի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող Սահամադրական դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ:

Ատենախոսության գիտական նորույթը. սույն աշխատանքը հանդիսանում է 2015 թվականի սահամանադրական փոփոխություններից հետո առաջին փորձերից մեկը, որում հեղինակը համակողմանիորեն վերլուծելում է սեփականության իրավունքի պաշտպանության և դրա սահմանափակումների վերաբերյալ ներպետական և միջազգային իրավունքի նորմատիվ իրավական ակտերը և դատական պրակտիկան, ներկայացնում է ինչպես սեփականության իրավունքի, այնպես էլ երրորդ անձանց և հասարակության շահերի պաշտպանվածության աստիճանը բարձրացնող երաշխիքներ, դրանց միջև արդարացի հավասարակշռության նոր հարաբերակցություն:

Գիտական նորույթի տարրեր են պարունակվում պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում.

1. ՀՀ Սահմանադրության 60-րդ և 74-րդ հոդվածների իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքներով պայմանավորված աշխատանքում հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները նույնպես տարածվում են իրավաբանական անձանց վրա: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով վերոնշյալ նորմերի հետազոտության արդյունքները, բացահայտելով Սահմանադրության 74-րդ հոդվածի բովանդակությունը՝ հիմնավորվում է այն մոտեցումը, որ օտարերկրյա կազմակերպությունների նկատմամբ պետք է կիրառելի լինեն **օտարերկրյա քաղաքացիների** հիմնական իրավունքները, ազատությունները և դրանց սահմանափակումները:

2. Կարևորելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությամբ ներկայումս նախատեսված է սեփականությունից զրկման հնարավորություն բացառապես դատական կարգով, ատենախոսությամբ հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ անբողոքարկելի վարչական ակտերով տուգանքների բռնագանձումը արտադատական կարգով չի ապահովում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության վերոնշյալ երաշխիքը: Նշված եզրահանգումը հիմնավորվում է ՀՀ Սահմանադրական

դատարանի որոշմամբ տրված սեփականությունից զրկման չափանիշների վերհանման և անբողոքարկելի վարչական ակտերով տուգանքների բռնագանձման կարգի հետ իրավական համեմատության արդյունքում: Հետազոտության արդյունքում հիմնավորվում է նաև, որ անձը, օգտվելով դատական պաշտպանության իր հիմնական իրավունքից, կարող է վիճարկել վարչական ակտը դատական կարգով, և այդ իրավունքի չօգտագործումը չի կարող դիտարկվել որպես համաձայնություն վարչական ակտի կատարման հետ, իսկ վարչական ակտերով տուգանքների բռնագանձումն իրականացնելու համար դատարան դիմելու նախաձեռնությամբ պետք է հանդես գա վարչական մարմինը:

3. ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է ժառանգելու իրավունքը: Բացահայտելով տվյալ նորմի համառոտ բովանդակությունը՝ հետազոտության արդյունքում հիմնավորվում է, որ *սահմանադրորեն երաշխավորված ժառանգելու իրավունքը պետության կողմից ապահովված ժառանագելու իրավունքի այն ծավալն է, որը ենթակա չէ սահմանափակման:* Այդ ծավալի որոշման համար ատենախոսությունում ներկայացվել են ժառանգություն տալու և ստանալու սահմանափակումները, դրանց համապատասխանությունը Սահմանադրության 60-րդ հոդվածին:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունն ունի մարդու հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանող օրենսդրության ստեղծման պոզիտիվ պարտականություն՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սեփականության իրավունքի և նույն հոդվածի 2-րդ մասով երաշխավորված ժառանգելու իրավունքի միջև արդարացի հավասարակշռության ապահովման նպատակով ատենախոսությունում հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ ժառանգատուի պարտատիրոջ կողմից պահանջ ներկայացնելու համար նախատեսված ժամկետը բաց թողնելու դեպքում վերջինիս պետք է տրվի այդ ժամկետի բացթողնման պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն:

5. Աշխատանքում հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դեպքում ներպետական օրենսդրությամբ համարժեք փոխհատուցմանը տրված հատուցման հստակ չափի սահմանումը, այն է՝ գույքի շուկայական արժեքից տասնհինգ տոկոսով ավելի գումար, առանձին դեպքերում կարող է հանգեցնել Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված՝ անձի համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքի խախտման: Միևնույն ժամանակ, իրականացնելով համեմատական իրավական հետազոտություն համարժեք

փոխհատուցման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տրված մեկնաբանությունների և ներպետական կարգավորումների միջև, բացահայտելով համարժեք փոխհատուցման տրամադրման նպատակը՝ աշխատանքում այն սահմանվում է որպես *օտարվող գույքի դիմաց տրվող հատուցում, որը սեփականատիրոջը տալիս է առանց էական բարդությունների առնվազն մինչև սեփականության օտարման պահը եղած տնտեսական վիճակի վերականգնման հնարավորություն:*

6. Սեփականության իրավունքի պահպանումը սեփականատիրոջ մոտ հանդիսանում է սեփականության իրավունքի պաշտպանության առաջնային միջոցը: Սեփականության իրավունքի պաշտպանության մակարդակի բարձրացման նպատակով աշխատանքում հիմնավորվում է սեփականության իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների սահմանման անհրաժեշտությունը, որոնց համաձայն՝

ա) այն դեպքերում, երբ հանրության գերակա շահի ապահովման համար անհրաժեշտ է կոնկրետ գույքը, այլ ոչ թե դրա նկատմամբ սեփականության իրավունքը, և հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի տևողությունը հայտնի է, ապա կարող է իրականացվել սեփականության իրավունքի առանձին իրավազորությունների տրամադրում ձեռքբերողին՝ առանց սեփականության օտարման,

բ) եթե հանրության գերակա շահ հանդիսացող նպատակին հնարավոր չէ հասնել առանց սեփականության օտարման, և գույքը ապագայում դադարում է սպասարկել հանրության գերակա շահը, ապա հնարավորության դեպքում կարելի է հասնել նախկին սեփականատիրոջ սեփականության իրավունքի վերականգնման: Այսինքն՝ եթե հնարավոր չէ ապահովել սեփականության իրավունքի պահապանում ներկայում, ապա կարելի է սահմանել իրավունքի վերականգնման հնարավորություն ապագայում:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը. ատենախոսությունում համակարգային վերլուծության են ենթարկվում սեփականության իրավունքին վերաբերող սահմանադրական և կոնվենցիոն նորմերը, առանձնացվում այդ իրավունքի պաշտպանության բարձր երաշխիքներ: Կատարված վերոնշյալ վերլուծությունները կարող են զարգացնել սեփականության իրավունքի վերաբերյալ տեսության մեջ առկա մոտեցումները, օգտագործվել տվյալ ոլորտի առանձին ինստիտուտների մեկնաբանման համար և հանդիսանալ տեսական հիմք այլ հետազոտողների համար:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում առկա մեկնաբանությունները կարող են օգտագործվել սեփականության

իրավունքի պաշտպանության (այդ թվում՝ դատական) ընթացքում, իսկ առանձին վերլուծություններ և առաջարկություններ կարող են հանգեցնել օրենսդրական փոփոխությունների՝ ուղղված սեփականության իրավունքի պաշտպանվածության ավելի բարձր մակարդակ սահմանելուն:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. ատենախոսությունը նախապատրաստվել է Եվրոպական համալսարանում, որտեղ իրականացվել է աշխատանքի քննարկում հեղինակավոր տեսաբանների հետ: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են մի քանի գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը. ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Առաջին և երկրորդ գլուխները կազմված են երեքական ենթագլուխներից, իսկ երրորդ գլխում ներառված են չորս ենթագլուխներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են գիտական մշակվածության աստիճանը, տեսական, նորմատիվ և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, դրա կառուցվածքը:

Ատենախոսության **«Սեփականության իրավունքի հասկացությունը, դրա առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգում և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի շրջանակներում»** վերտառությամբ առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Տվյալ գլուխը գլխավորապես վերաբերում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի մեկնաբանությանը:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Սեփականության իրավունքի հասկացությունը և տարրերը Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգում»** վերնագրով, հեղինակը բացահայտում է սեփականության և սեփականության իրավունքի հասկացությունները ՀՀ Սահմանադրությամբ և ներպետական այլ նորմատիվ իրավական ակտերով, ներկայացնում սեփականության իրավունքի սուբյեկտներին, նրանց կարգավիճակով պայմանավորված առանձնահատակությունները:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Սեփականության իրավունքի առանձնահատկությունները «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»** կոնվենցիայի շրջանակներում» վերնագրով, ներկայացվում են տվյալ կոնվենցիայով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով սեփականության իրավունքի հասկացությունը, դրա առնանձահատկությունները և առանձին տարրերի տարբերությունները ՀՀ իրավական համարգի կարգավորումների հետ: Տվյալ ենթագլխում ներկայացվում են նաև այլ պետությունների սահմանադրություններում սեփականության իրավունքի սահմանման առանձնահատկությունները:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Սեփականության իրավունքի իրավազորությունները Հայաստանի Հանրապետությունում, այլ երկրներում և Կոնվենցիայի շրջանակներում: Սեփականության իրավունքի ծագման պահը և հիմքերը»** վերնագրով, խոսվում է սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավազորությունների հասկացության և էության, այլ իրավական համակարգերում դրանց էական տարբերությունների մասին: Միևնույն ժամանակ, տվյալ ենթագլխում վերլուծվում է սեփականության իրավունքի ծագման պահի և հիմքի կարևորությունը սեփականատիրոջ իրավունքի և այլ անձանց շահերի արդարացի հավասակշռության ապահովման հարցում:

Աշխատանքի **«Սեփականության իրավունքի սահմանափակումների ամբողջական կանոնակարգումը՝ որպես սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք»** վերտառությամբ երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից: Տվյալ գլխում գլխավորապես անդրադարձ է կատարվում ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 2-4-րդ և 8-րդ մասերին:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ **«Սեփականության իրավունքի սահմանափակման պայմանները»** վերնագրով, նվիրված է սեփականության իրավունքի իրավաչափ սահմանափակման ընդհանուր պայմաններին, սեփականությունից զրկման ներպետական և կոնվենցիոն հասկացությունների տարբերությանը, դրա իրականացման՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կարգի առանձնահատկություններին:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Ժառանգելու երաշխավորված իրավունքի սահմանափակումները»** վերնագրով, ներկայացվում է ժառանգելու իրավունքի էությունը, բացահայտվում է պետության կողմից այդ իրավունքի երաշխավորման սահմանները՝ դիտարկելով ժառանգելու իրավունքի նկատմամբ նախատեսված սահմանափակումները:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Հարկերը և պարտադիր այլ վճարները՝ որպես սեփականության իրավունքի սահմանափակում»** վերնագրով, ներկայացվում են հարկերի և պարտադիր այլ վճարների՝ որպես սեփականության իրավունքի սահմանափակման առանձնահատկությունները, ինչպես նաև քննարկվում է սեփականատիրոջ շահերի պաշտպանության տեսանկյունից հարկային և վարչական պատասխանատվության միաժամանակյա կիրառության իրավաչափությունը:

Ատենախոսության **«Հանրության գերակա շահերի ապահովման ընթացքում սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքները»** վերտառությամբ երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Տվյալ գլխուխը գլխավորապես նվիրված է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի մեկնաբանությանը:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ներպետական և կոնվենցիոն սկզբունքները»** վերնագրով, ներկայացվում է հանության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման ընդհանուր բնութագիրը, սեփականության օտարման ներպետական և կոնվենցիոն հիմնական պայմանները:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման դեպքերը և կարգը»** վերնագրով, նշվում են այն նպատակները, որոնց ապահովման համար սեփականությունը կարող է օտարվել, ներկայացվում է սեփականության օտարման կարգը:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Նախնական և համարժեք փոհատուցումը՝ որպես սեփականատիրոջ և հանրության շահերի միջև արդարացի հավասարակշռության պայման»** վերնագրով, հեղինակը բացահայտում է նախնական և համարժեք փոխհատուցման հասկացությունը, իրականացնում իրավահամեմատական վերլուծություն ներպետական օրենսդրության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների միջև, ներկայացնում դրանց տարբերությունները և առանձնացնում սեփականության իրավունքի պաշտպանության բարձր մակարդակ ապահովող երաշխիքները:

Ատենախոսության երրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ **«Հանրության գերակա շահերն ապահովելիս սեփականության իրավունքի պահպանման և վերականգնման հնարավորությունը՝ որպես սեփականության իրավունքի պաշտպանության լրացուցիչ երաշխիք»** վերնագրով, ներկայացվում են

սեփականատիրոջ մոտ սեփականության իրավունքի պահպանմանը կամ վերականգնմանն ուղղված միջոցներ, որոնք ուղղված են սեփականության իրավունքի պաշտպանության ապահովմանը՝ առանց հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի իրականացմանը խոչընդոտելու, սեփականատիրոջ և հանրության շահերի միջև արդարացի հավասարակշռության հաստատմանը:

Եզրակացությունում շարադրվում են հետազոտության արդյունքների հիման վրա մշակված եզրակացությունները, որոնք հանգում են հետևյալին.

1. Սահմանադրությունը սահմանում է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում հողի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու արգելքի կանխավարկածը՝ օրենքով այլ բան նախատեսված չլինելու պարագայում, սակայն Սահմանադրությամբ չի օգտագործվում օտարերկրյա իրավաբանական անձ եզրույթը: Իսկ ՀՀ հողային օրենսգրքով հողային հարաբերությունների սուբյեկտ հանդիսացող օտարերկրյա իրավաբանական անձանց համար չի նախատեսվում այդպիսի սահմանափակում: Օրենսդրի նման մոտեցումը հավանաբար պայմանավորված է Սահմանադրության 74-րդ հոդվածի անտեսմամբ կամ սահմանափակ մեկնաբանմամբ: Այսինքն՝ օրենսդիրը հողային հարաբերությունները կարգավորելիս առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ օտարերկրա քաղաքացու հիմնական իրավունքի սահմանափակումը կիառելի չէ օտարերկրյա իրավաբանական անձի նկատմամբ**:**

Այնինչ՝ վերոգրյալ սահմանափակման տարածումը օտարերկրյա իրավաբանական անձանց վրա համահունչ է Սահմանադրության 60-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սահմանափակման նպատակին, և այն պետք է տարածվի նաև օտարերկրյա իրավաբանական աձանց նկատմամբ:

Կարծում ենք, անհրաժեշտ է հստակ սահմանել, որ իրավաբանական անձանց վրա տարածվում են հիմնական իրավունքները, ազատությունները և *դրանց սահմանափակումները*՝ այնքանով, որքանով այդ իրավունքները, ազատությունները և *դրանց սահմանափակումներն* իրենց էությամբ կիրառելի են իրավաբանական անձանց նկատմամբ: Ընդ որում՝ նպատակահարմար է ուղղակիորեն նշել, որ օտարերկրյա իրավաբանական անձանց վրա տարածվում են օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված հիմնական իրավունքները, ազատությունները և դրանց սահմանափակումները:

2. «Սեփականությունից զրկում» եզրույթը Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ունի տարբերվող նշանակություն: Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում ուղղակիորեն նախատեսել է այն դեպքերը, որոնց առկայության դեպքում սեփականության իրավունքի դադարումը հանդիսանում է

սեփականությունից զրկում: Միևնույն ժամանակ Սահմանադրությամբ նախատեսված է սեփականությունից զրկման հնարավորություն **միայն դատական կարգով:**

Հետևապես, պատասխանատվություն նախատեսող անբողոքարկելի վարչական ակտերի հարկադիր կատարումը համեմատելով Սահմանադրական դատարանի որոշմամբ նախատեսված սեփականությունից զրկման չափանիշների հետ՝ գալիս ենք այն եզրահանգման, որ վերոգրյալ ակտերի հարկադիր կատարումը պետք է իրականացվի բացառապես արդարադատություն իրականացնող մարմնի մասնակցությամբ:

Ընդ որում՝ Սահմանադրությունը «բացառությամբ դատական կարգով» եզրույթով սահմանում է սեփականությունից զրկման կարգ, այսինքն՝ փաստացի սեփականությունից զրկմանը նախորդող գործընթացը: Դրանից հետևում է, ոչ միայն այն եզրահանգումը, որ առանց դատարանի մասնակցության ապահովման անձին չի կարելի զրկել սեփականությունից, այլ նաև սեփականությունից զրկումը կարող է բացառապես հաջորդել դատական ընթացակարգին:

Սահմանադրությունը տվյալ հարցում սահմանում է սեփականության իրավունքի պաշտպանության ավելի բարձր մակարդակ, քան Կոնվենցիան, սակայն պրակտիկայում այն տվյալ մեկնաբանությամբ չի կիրառվում: Պրակտիկայում անբողոքարկելի վարչական ակտերով իրականացվող բռնագանձումները դիտարկվում են որպես **վերահսկողություն սեփականության օգտագործման նկատմամբ** (control of the use of property)՝ հղում անելով ՄԻԵԴ-ի գործերից մեկով հայտնած դիրքորոշմանը, ինչն ուղղակիորեն հակասում է սեփականությունից զրկման ներպետական հասկացության բովանդակությանը:

Միանշանակ արտադատական կարգով տուգանքների բռնագանձումը օպերատիվ և նվազ ծախսատար միջոց է պետության համար, ինչպես նաև զգալիորեն թեթևացնում է դատական համակարգի ծանրաբեռնվածությունը, սակայն մյուս կողմում առկա է բարձրագույն արժեք հանդիսացող անձի հիմնական իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը, որը և տվյալ դեպքում չի պահպանվում Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասի համատեքստում:

3. Սեփականատիրոջ իրավունքների, այնպես էլ երրորդ անձանց շահերի պաշտպանության ապահովման հարցում սեփականության իրավունքի ծագման հիմքը և ծագման պահն ունեն էական նշանակություն: Վերոնշյալ իրավունքների և շահերի միջև արդարացի հավասարակշռության ապահովման նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչպես սեփականության իրավունքի իրավազորությունների իրականացումը, այնպես էլ անձի մոտ

սեփականության իրավունքի ծագումը կախվածության մեջ է դրվում վերջինիս հայեցողությունից՝ աշխատանքում հիմնավորվում է պետական գրանցում պահանջող սեփականության իրավունքի ծագման պահի միասնական մոտեցման սահմանման նպատակահարմարությունը:

4. Դիտարկելով այն հարցը, համաձայն որի՝ արդյո՞ք արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ անձի սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով չսահմանված նպատակներով, և իրականացնելով տվյալ նորմի և Սահմանադրության 76-րդ հոդվածի համակարգային վերլուծություն՝ ատենախոսությունում հիմնավորվում է այն դիրքորոշումը, որ արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելու նպատակն ամփոփված է Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասում: Հետևապես, սեփականության իրավունքի սահմանափակման նպատակները սահմանափակվում են վերոնշյալ նորմով նախատեսված նպատակներով:

5. Ժառանգություն տալու և ստանալու իրավունքները սահմանափակվում են գլխավորապես այլ անձանց հիմնական իրավունքների պաշտպանության նպատակով: Ժառանգություն տալու և ստանալու իրավունքների նկատմամբ սահմանափակումները պետք է համապատասխանեն Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սեփականության իրավունքի սահմանափակման պահանջներին: Դրանց չպահպանման դեպքում կիրառված սահմանափակումն իրավաչափ չի լինի:

6. Ներպետական օրենսդրությամբ պարտատիրոջը հնարավորություն է տրվում իր պահանջը ներկայացնել պարտապանի մահից հետո՝ 6 ամսվա ընթացքում, և այդ ժամկետի բացթողումը հանգեցնում է իրավունքի դադարման: Դատական պրակտիկայում նշվում է, որ չվերականգնվող նման վերջնաժամկետի սահմանման նպատակն է ապահովել ժառանգի համար ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի և ժառանգատուի պարտավորությունների հաշվառմամբ որոշելու իր՝ ժառանգման իրավունքի իրացման հարցը: Սակայն գտնում ենք, որ տվյալ դեպքում առկա է անարդար հարաբերակցություն պարտատիրոջ պահանջի իրավունքի (սեփականության իրավունքի) և ժառանգի՝ ժառանգություն ստանալու իրավունքի իրացման միջև, քանի որ նույնիսկ եթե ժառանգը առկա պարտավորությունների մասին իմանա միայն ժառանգությունն ընդունելուց հետո, վերջինս այդ պարտավորություններով պատասխանատվություն է կրում միայն ժառանգված գույքի շրջանակներում:

Կարծում ենք՝ պարտատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից անհրաժեշտ է սահմանել պահանջ

ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու հնարավորություն:

7. Սեփականության իրավունքի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունի հարկային իրավախախտումների արդյունքում կիրառվելիք հարկային և վարչական պատասխանատվության տեսակների տարանջատումը: ՀՀ Սահմանադրական դատարանը դրանք տարբերակում է ըստ նպատակների՝ նշելով, որ վարչական պատասխանատվությունն ունի պատժիչ և կանխարգելիչ բնույթ, իսկ հարկային պատասխանատվության նպատակը պետության և հասարակության գույքային վնասի հատուցումն է:

Սակայն վնասը պետք է լինի չափելի, իսկ ՀՀ հարկային օրենսգրքով առանձին իրավախախտումների համար նախատեսվում է տուգանք հստակ սահմանված չափով, ինչպիսի պարագայում այն չունի վերականգնող բնույթ: Ընդ որում՝ առանձին դեպքերում անձի նկատմամբ միևնույն իրավախախտման համար պրակտիկայում կիրառվում է 2 պատժիչ բնույթի իրավական պատասխանատվություն՝ նախատեսված ՀՀ հարկային օրենսգրքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, ինչն անմիջականորեն խախտում է անձի սեփականության իրավունքը:

Ավելին՝ անտրամաբանական է նույն իրավախախտման համար տարբեր օրենքներում նույնաբնույթ պատասխանատվության միջոցների նախատեսումը: Իսկ եթե օրենսդիրը գտնում է, որ սահմանված երկու կամ ավելի տուգանքների հանրագումարն է հանդիսանում պատասխանատվության արդար չափ, ապա կարող է օրենքներից մեկով նախատեսված տուգանքի չափը բարձրացնել՝ հանելով մյուս օրենքով նախատեսված պատասխանատվությունը:

8. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականությունն օտարելիս Սահմանադրությունը սահմանում է **համարժեք փոխհատուցման** պարտադիր պայման: Սակայն, օրինակ, ՄԻԵԴ-ն իր որոշումներում նշում է, որ առանձին դեպքերում անձին կարող է տրվել ոչ ամբողջական փոխհատուցում կամ ընդհանրապես փոխհատուցում չտրվել՝ գլխավորապես պայմանավորել այդ հանգամանքը հետապնդվող նպատակի կարևորությամբ: Հետևաբար, տվյալ դեպքում մեր իրավական համակարգում նախատեսված է սեփականության իրավունքի պաշտպանության ավելի բարձր երաշխիք, որն էլ պետք է անշեղորեն կիրառվի պրակտիկայում:

9. **Սեփականության իրավունքի պահպանման հնարավորություն.** սեփականության իրավունքի պաշտպանությունը նախևառաջ ենթադրում է գոյություն ունեցող սեփականության իրավունքի պահպանման ապահովում: Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով անձին պատկանող

գույքը կարող է օտարվել: Բայց այդ նպատակի ապահովման համար կարող է անհրաժեշտ լինել հենց տվյալ **գույքը**, *այլ ոչ թե դրա նկատմամբ սեփականության իրավունքը:* Նման պայմաններում, եթե հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի գոյության **ժամկետն ի սկզբանե հայտնի լինի** (օրինակ՝ առանձին միջազգային պարտավորության կատարում), և այն ունենա կարճ տևողություն, ապա հանրության գերակա շահի ապահովմանը հնարավոր կլինի հասնել առանց սեփականության օտարման: Ավելին՝ նման պայմաններում սեփականության հարկադիր օտարումը հիմնական իրավունքի սահմանափակման համաչափության տեսանկյունից կդիտվի որպես նպատակին հասնելու համար ոչ անհրաժեշտ միջոց**:** Սակայն առանց գույքն օտարելու հետապնդվող նպատակին հասնելու այլ մեխանիզմ օրենքով նախատեսված չէ:

Կարծում ենք, որ նման դեպքերում անձին պատկանող սեփականությունը օտարելու փոխարեն հնարավոր է փոխանցել գույքն **օգտագործելու իրավունքը**: Արդյունքում՝ անձի մոտ կպահպանվի սեփականության իրավունքը գույքի նկատմամբ և կարճ ժամանակ անց գույքի նկատմամբ բոլոր իրավազորությունները կրկին կվերադառնան սեփականատիրոջը: Ընդ որում՝ տվյալ կարգով ոչ միայն սեփականատերը հնարավորություն կունենա պահպանել գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, այլ նաև օգտագործման իրավունք ձեռքբերողի համար հնարավորություն կստեղծվի ոչ մեծ ծախսերի միջոցով հասնել հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի իրականացմանը:

10. **Սեփականության իրավունքի վերականգնման հնարավորություն.** հանրության գերական շահ հանդիսացող նպատակին առանց սեփականության օտարման հասնելու անհնարինության դեպքում գույքը պետք է օտարվի: Սակայն ապագայում տվյալ գույքը կարող է դադարել սպասարկել հանրության գերակա շահ հանդիսացող նպատակը:

Եթե սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքների սահմանման առաջնային նպատակը **սեփականության իրավունքի պահպանումն է** և դրա իրավազորությունների անխոչընդոտ իրականացումը, օտարման նպատակ հանդիսացող հանգամանքի դադարման դեպքում անհրաժեշտ է դիտարկել սեփականության ճակատագրով հետաքրքրված նախկին սեփականատիրոջ **իրավունքի վերականգնման հնարավորությունը:**

Մասնավորապես, կարծում ենք, որ գույքի նախկին սեփականատերը պետք է ունենա գույքը պետությունից հետգնելու իրավունք: Այդ իրավունքի իրականացումը պետք է հնարավոր լինի հանրության գերակա շահ հանդիսացող նպատակի դադարման պահից հետո՝ որոշակի ժամկետի ընթացքում: Ընդ որում՝

հաշվի առնելով պետության իրավունքների պաշտպանության և գույքի հետագա ճակատագրի անորոշության վերացման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սեփականատերը գույքի նկատմամբ իր հետաքրքրության առկայության մասին մտածելու բավական երկար ժամանակ է ունեցել, այդ ժամկետը պետք է լինի կարճ: Ընդ որում՝ գույքի հետգնման հնարավորության սահմանումը ողջամտորեն ձեռնտու է նաև պետությանը, որն իրեն անցած գույքը կրկին կարող է վերածել դրամական միջոցների:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. **Ապրեսյան Զ. Մ.** Ամուսնու՝ պետական գրանցում պահանջող սեփականության իրավունքի ծագման պահը, «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, N 2 (48), 2019, էջ 11-14:

2. **Ապրեսյան Զ. Մ.** Պարտատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանությունը ժառանգատու-պարտապանի մահվան դեպքում, «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 10 (02), 2019, էջ 211-221:

3. **Ապրեսյան Զ. Մ.** Հողի սեփականության իրավունքի սահմանափակումը օտարերկրյա քաղաքացիների համար, «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, N 2 (51), 2020, էջ 50-55:

4. **Ապրեսյան Զ. Մ.** Սեփականությունից զրկման սահմանադրական տարրերը և կարգը, «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 11 (02), 2020, էջ 252-266:

5. **Ապրեսյան Զ. Մ.** Համարժեք փոխհատուցման էությունը հանրության գերակա շահի ապահովման նպատակով սեփականությունն օտարելիս, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, N 11-12 (257-258), 2020, էջ 3-11:

6. **Ապրեսյան Զ. Մ.** Հանրության գերակա շահերի ապահովման ժամանակ սեփականության իրավունքի պահպանման և վերականգնման հնարավորությունը, «Արդարադատություն» գիտական հանդես, Երևան, N 1 (53), 2021, էջ 47-54:

7. **Ապրեսյան Զ. Մ.** Ժառանգելու երաշխավորված իրավունքի սահմանափակումները, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան, N 1-2 (259-260), 2021, էջ 43-51:

АПРЕСЯН ЗОРАК МЕХАКОВИЧ
КОНСТИТУЦИОННЫЕ ГАРАНТИИ ЗАЩИТЫ ПРАВА СОБСТВЕННОСТИ (СРАВНИТЕЛЬНОЕ ПРАВОВОЕ ИССЛЕДОВАНИЕ И ПРАКТИКА ЕВРОПЕЙСКОГО СУДА ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА)
РЕЗЮМЕ

В современном обществе владение определенным имуществом с правом собственности имеет решающее значение для удовлетворения потребностей практически любого человека. В Республике Армения все формы собственности находятся под защитой государства, и государство обязано как защищать права собственника от посягательств со стороны третьих лиц, а также не вмешиваться в осуществление собственником права собственности. А с другой стороны, осуществление прав собственности не должно наносить вред правам и законным интересам общества и третьих лиц.

Помимо большого значения права собственности, необходимость изучения этой темы обусловлена также изменениями в Конституции РА 2015 года, в результате которых были внесены существенные изменения в нормы, посвященные праву собственности.

Кроме того, по действующему законодательству справедливый баланс между правом собственности человека, общественными интересами и интересами других лиц находится не на самом возможно высоком уровне, в основном наносив вред правам собственника. В таких обстоятельствах необходимо пересмотреть существующие гарантии защиты прав собственности, а также определить новые, изучая лучший международный опыт в этой области.

Для установления справедливого баланса между правами собственника и других лиц имеют большое значение решения Европейского суда по правам человека, которые как определяют объем право собственности, так и предусматривают возможность ограничения прав собственности с целью защиты прав других лиц. Внедрение такого международного опыта во внутригосударственную правовую систему приведет к определению эффективных гарантий защиты прав собственности, справедливому балансу прав собственника и интересов других лиц, четкому определению ограничений прав собственности, что и определяет актуальность данной работы.

В то же время следует отметить, что в некоторых случаях армянское законодательство предусматривает более высокие гарантии защиты прав

собственности, чем в международных договорах, но на практике они не всегда интерпретируются в установленном порядке.

Целью данной диссертации является повышение уровня защиты права собственности, установление справедливого баланса между правами собственника и интересами третьих лиц и общества, внедрение лучшего международного опыта в правовую систему Республики Армения.

Научная новизна диссертационного исследования заключается в том, что данная работа является одной из первых попыток после конституционных изменений 2015 года, в которой автор всесторонне анализирует нормативные правовые акты отечественного и международного права и судебную практику по защите права собственности по его ограничениям, представляет новые гарантии, которые как увеличивают уровень защиты право собственности, так и интересов третьих лиц и общества, создают новый справедливый баланс между ними. Элементы научной новизны диссертационного исследования содержатся в основных положениях, выносимых на защиту.

Теоретическая значимость исследования заключается в том, что проведенный анализ может развить существующие подходы в теории права собственности, использоваться для интерпретации отдельных институтов в этой области и послужить теоретической основой для других исследований.

Практическая значимость исследования заключается в том, что содержащиеся в нем интерпретации могут быть использованы для защиты прав собственности (включая судебные разбирательства), а отдельные выводы и предложения могут привести к законодательным изменениям, направленным на установление более высокого уровня защиты права собственности.

Диссертация подготовлена в Европейском университете Республики Армения, где проводилось обсуждение работы с авторитетными теоретиками. Основные положения диссертации опубликованы в научных работах автора.

APRESYAN ZOHRAK MEKHAK

CONSTITUTIONAL GUARANTEES FOR THE RIGHT OF OWNERSHIP (COMPARATIVE LEGAL RESEARCH AND PRACTICE OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS)

SUMMARY

In modern society, the belonging of a certain property with the right of ownership is crucial for satisfying the needs of almost any person. In the Republic of Armenia, all forms of property rights are under the protection of the state and the state is obliged to protect the rights of the property owner from encroaches by third parties, as well as not to interfere in the exercise of the property right by the owner. On the other hand, the exercise of property rights shall not harm the legitimate interests of the society and individuals and their rights protected by law.

In addition to the great importance of right of ownership, the need to study this topic is also conditioned by the amendments to the RA Constitution in 2015, as a result of which significant changes have been made in the norms dedicated to the right of ownership.

Furthermore, under the current legislation, a fair balance between a person's property rights and public and other persons' interests is not at the highest possible level, mainly harming the interests of the former. In such circumstances, it is necessary to review the existing guarantees of protection of property rights, as well as to define new ones, studying the international best practice in this sphere.

In order to establish a fair relationship between the rights of property owner and other persons, the position of the European Court of Human Rights in recent decades, which defines the scope of property rights, which, by the way, change over time, as well as the possibility of restricting property rights, has been crucial.

The introduction of such international practice in the domestic legal system will lead to the definition of effective guarantees for the protection of property rights, the fair balance of the rights of the property owner and other persons, the clear definition of the restrictions on the rights of the property owner, which determines the contemporaneity of this work.

At the same time, it should be noted that in some cases domestic legislation provides for higher guarantees of protection of property rights than in international treaties, but in practice they are not always interpreted literally.

The aim of this dissertation is to increase the level of protection of property rights, to establish a fair balance between the rights of the owner and interests of third

parties and society, to invest the best international practice in the legal system of the Republic of Armenia.

The scientific novelty of the dissertational research is that it is one of the first attempts after the 2015 constitutional amendments, in which the author comprehensively analyzes domestic and international normative legal acts and judicial practice on the protection of property rights, its limitations, presents new guarantees of protection of both property rights and interests of third parties and society, which form a fair balance between them. Elements of scientific novelty are contained in the main provisions presented for defense.

The theoretical significance of the study is that the performed analyzes can develop the existing approaches in the theory of property rights, be used to interpret different institutes in this field and serve as a theoretical basis for other researches.

The practical significance of the study is that the interpretations contained in it can be used for the protection of property rights (including litigation), and separate conclusions and recommendations may lead to legislative changes aimed at setting a higher level of protection of property rights.

The thesis was prepared at the European University of the Republic of Armenia, where the discussion and review of the work with authoritative theorists were held. The main provisions of the thesis are published in the scientific works of the author.